ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով պարզեցված ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ մուտքը կասեցնող արգելափակոցի տեղադրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 16.03.2017թ. N 25/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.03.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Դ.Հարությունյանը, Մ.Սարդարյանը, Գ.Օսիպյանը, Ա.Եղիազարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Էլկոմպ» ՍՊԸ-ն, (ք.Երևան, Բաղրամյան-76/3)
2. «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն, (ք.Երևան, Ն.Տիգրանյան-27)
3. «ՄԻԿՌՈԼԼ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Մարգարյան-13/19)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Էլկոմպ» ՍՊԸ-ի, «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի և «ՄԻԿՌՈԼԼ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

«Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված-2-ը, Հավելված-9-ը՝ հայտի ապահովում (տուժանք և վճարման պահանջագիր), Հավելված-3.3-ը, Հավելված--3.5-ը և Հավելված-3.6-ը առանձին հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
«Էլկոմպ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն վճարման պահանջագիրը լրացված է վճարման պահանջագրի լրացման կարգի խախտմամբ, մասնավորապես մասնակիցը վճարման պահանանջագրի համարակալման դիմաց նշել են համար:
«ՄԻԿՌՈԼԼ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և վճարման պահանջագիրը լրացված է վճարման պահանջագրի լրացման կարգի խախտմամբ, մասնավորապես մասնակիցը վճարման պահանանջագրի համարակալման դիմաց նշել են համար և ամսաթիվ:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ			Նախահաշվային գինը ՀՀ դրամ
		«Էլկոմպ» ՍՊԸ	«Էլիպս Ջիէյ» ՍՊԸ	«ՄԻԿՌՈԼԼ» ՍՊԸ	
1	Մուտքը կասեցնող արգելափակոցի տեղադրման ծառայություններ	4583333	791000	500000	**850000**

*«ՄԻԿՌՈԼԼ» ՍՊԸ -ն ԱԱՀ վճարող չէ:

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշման 45-րդ կետի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-«Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ քանի որ մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ դրանք հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

-«Էլկոմպ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ քանի որ մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

-«ՄԻԿՌՈԼԼ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ քանի որ մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

-ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով պարզեցված ընթացակարգը ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Դ.Հարությունյան

Մ.Սարդարյան

Գ.Օսիպյան

Ա.Եղիազարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան